ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Կարեն Սարդարյանի և Մարինե Ֆարմանյանի,

ելնելով ՀՀ փաստաբանների պալատի մարմինների 2023 թվականի հաշվետվությունները հաստատելու անհրաժեշտությունից,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով,

Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի մարմինների 2023 թվականի **հաշվետվությունները՝**

1) ՀՀ **փաստաբանների պալատի խորհրդի գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի,**

2) ՀՀ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի,**

3) ՀՀ **փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելված 3-ի:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

16 հունվարի 2024թ.
թիվ 1/18-Լ
ք. Երևան